«ՆԵՈՍԻՍՏԵՄ» ՍՊԸ

ք.Երևան, Դ.Մալյան 6շ., բն. 22
էլ-փոստ՝ neosystem.am@gmail.com
հեռ. +37499 00 44 46

«ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/9-17/1» շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովին

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը, ինչպես նաև «ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ **ապահովող ծառայության**» կողմից 2017 թվականի մարտի 28-ին հայտարարված «ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/9-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ հրավեր) 3-րդ բաժինը՝ խնդրում եմ տալ պարզաբանումներ.

1. Հրավերի հավելված 6-ով՝ պայմանագրի նախագծով նախատեսված մատուցման ենթակա ծառայությունների տեխնիկական բնութագրի վերաբերյալ: Մասնավորապես, տարբեր բնութագրեր ունեցող ծառայությունները խմբավորված են մեկ ընդհանուր չափաբաժնում, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված պահանջին:
2. Հրավերի 4-րդ հավելվածով նախատեսված գնային առաջարկի լրացման կարգի վերաբերյալ, քանի որ այն անհասկանալի է և հակասում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 35-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին:
3. Անհասկանալի է հրավերի ամբողջ բովանդակությունը՝ գնումը նախատեսված է մինչև 5.0 մլն թե՞ ավելի նախահաշվային գին ունեցող գնման համար:

«Նեոսիստեմ» ՍՊԸ-ի տնօրեն Դ.Հակոբյան

Digitally signed by HAKOBYAN DAVIT 3207750087
Date: 2017.03.31 17:01:38 GMT+04:00

(ստորագրությունը)

Կ.Տ.